ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

07.03.2015թ. գ. Այրք

Կայացավ համայնքի ավագանու հերթական նիստ:
Նիստին մասնակցում են համայնքի ավագանու թվով հինգ անդամներ:
Հրավիրված են գյուղապետարանի աշխատակիցներ :
Նիստը վարում է համայնքի ղեկավար Արտյոմ Շաբոյանը :
Քարտուղար՝ Մարտիկ Զարոյան

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԼՍԵՑԻՆ - Համայնքի բյուջեի 2015 թվականի տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման մասին :
/ զեկ. համայնքի ղեկավար Ա. Շաբոյան /

Քվեարկության դրվեց օրակարգային հարցը , որն անցավ միաձայն : Որից հետո զեկուցողն անցավ հարցի քննարկմանը : Նշվեց ,որ համայնքի բյուջեի 2014 թվականի կատարողականը կազմել է 100.2 տոկոս , կամ նախատեսված 14579.6 հազ . դրամի դիմաց մուտքագրվել է համայնքի բյուջե 14606,16 հազ դրամ :Անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կատարողականը կազմել է 112,1 տոկոս ,աճը կազմել է 1579.21 հազ դրամ:
Սեփական եկամուտների պլանը կատարվել է 100.5 տոկոսով : Կամ նախատեսված 5581.2 հազ դրամ սեփական եկամուտների դիմաց կատարողականը կազմել է 5607.7 հազ. դրամ : Աճը կազմել է 26.5 հազ . դրամ :
«Գույքահարկ » հոդվածի ուղղությամբ կատարողականը կազմել է 392 տոկոս ,կամ նախատեսված 252.0 հազ դրամի դիմաց մուտքագրվել է համայնքի բյուջե 987, 91 հազ. դրամ : Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 477.8 հազ. դրամ :
«Հողի հարկ » հոդվածի ուղղությամբ կատարողականը կազմել է 86.3 տոկոս , կամ նախատեսված 759.7 հազ. դրամի դիմաց կատարողականը կազմել է 655, 65 հազ դրամ : Նվազումը կազմում է 104,0 հազ. դրամ ,որը համայնքից անհասցե հեռացած հողատերերի չմուծված հողի հարկի արդյունք է :
Անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ այս հոդվածի ուղղությամբ նկատվել է 27.23 հազ դրամի նվազում :
«Հողի վարձավճար » հոդվածի ուղղությամբ կատարողականը կազմել է 86.7 տոկոս ,կամ նախատեսված 4569.5 հազ. դրամ պլանի դիմաց մուտքագրվել է համայնքի բյուջե 3964.2 հազ. դրամ :Անցյալ նույն ժամանակահատվածի համեմատնույնպես նկատվում է նվազում , որը կազմում է 423.8 հազ դրամ :
Ընդհանուր առմամբ համայնքի բյուջեի 100.2 տոկոս կատարողականը և համահարթեցման դոտացիայի ժամանակին ստացումը հնարավորություն է տվել գյուղապետարանին կատարելու պետության առջև ունեցած հարկային պարտավորությունները ինչպես նաև ժամանակին վճարելու աշխատակիցների աշխատավարձը:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի 3 –րդ կետի դրույթներով համայնքի ավագանին

որոշում է՝

1. հաստատել համայնքի բյուջեի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը :
Որոշումն ընդունվեց միաձայն : Կողմ -5, ձեռնպահ – 0, դեմ – 0 :

Համայնքի Ղեկավար Արտյոմ Շաբոյան